163

ՀԱՅԳՅՈՒՂԿՈՄՊԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

Ա. ՆԵԿՐԱՍՈՎ

ԳՅՈՒՂԿՈՄՊԵՐԱՑՈՒԱՑԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԳՅՈՒՂԿՈՄՊԻ

ԵՐԵՎԱՆ 1929 թ.

ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

Ա. ՆԵԿՐԱՍՈՎ

ԳՅՈՒՂԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

16764
A II 23599

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊԻ

ՔԵՐԹՎԱԾ 1929 թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ

Գրառեպգ.խվար 1826 բ. Պատվեր 2891
Տիրաժ 1500

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խորհրդային պայմաններում աշխատող գյուղատնտեսական կոոպերացիան իր առաջ դնում է հետևյալ հիմնական խնդիրները՝ ա) գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումը, բ) չքավոր և միջակ գյուղացիների վերաբերյալ ոգնության գործի կազմակերպումը և գ) գյուղացիական տնտեսության վերակառուցումը՝ կոլեկտիվ (արտելային) հիմունքներով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Մեր գյուղատնտեսության հետամնացությունը բոլորի համար միանգամայն անվիճելի և ակներև փաստ է: Մեր գյուղում կան խոշոր քանակությամբ գյուղացիներ, վորոնք իմպերիալիստական պատերազմի ժամանակ յեղել են արտաստհմանում, վորպես ռազմագերիներ աշխատել են գերմանական գյուղատնտեսության մեջ, թե ինչպես և տարվում գյուղատնտեսությունն այլ յերկրներում: Այդ աշխարհ տեսած մարդիկ կարող են պատմել և պատմում են իրենց համագյուղացիներին շատ հետաքրքիր և նոր բաներ: Բացի այդ, գյուղացիության համար հրատարակվող մեր թերթերում և ամսագրերում շատ հաճախակի յեն պատահում գիրքեր՝ թե Արևմտյան Յեվրոպայի և ամերիկյան գյուղացիների աշխատանքի պայմանների մասին և թե ինչպես և դրված գյուղատնտեսությունն արտաստհմանում:

Մեր գյուղատնտեսությունն Արևմտյան Յեվրոպայի—որինակ՝ Գերմանական գյուղատնտեսության հետ համեմատելիս, ամենից առաջ աչքի յե ընկնում մեր

ցանքսերի բերքի սակավությունն ու քչությունը: Ինչ բույս էլ վերցնենք՝ հատիկային կուլտուրա կամ թե կարտոֆիլ, մենք կտեսնենք, որ մեծ տարբերություն կա մեր և Արևմտյան Եվրոպայի միջև: Եթե մենք Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական գոտում հատիկային բույսերի մեկին–հինգ, մեկին–վեց բերքը հաշվում ենք միջակ, Արևմուտքում միջակ բերքը համարվում է մեկին–տասը, մեկին–տասներկու: Գեռնախնձորը, որ մեզ մոտ տալիս է մեկին–չորս, մեկին–հինգ, Արևմտյան Եվրոպայում հասնում է մեկին–տասներկուսի, մեկին–տասնհինգ:

Նույնպես գրություն և նույնպիսի խիստ տարբերություն մենք կարող ենք տեսնել նաև կաթնատնտեսության բնագավառում: Մեր մի կովի տարվա միջին կիթը չի անցնում վաթսուն–ութսուն գուլից, այն ինչ գանիական, կամ հոլանդական կովը տալիս է յերեք–չորս հարյուր, իսկ ավելի լավ տնտեսություններում՝ անգամ մինչև վեց հարյուր գուլ:

Մի խոսքով, Արևմտյան Եվրոպայի և ամերիկյան գյուղացու տնտեսությունը մերից տարբերվում է թե մեծ կուլտուրականությամբ և թե մեծ շահավետությամբ (ապատվությամբ):

Մինչդեռ կապիտալիստական յերկրներում գյուղացիության չքավոր և միջակ շերտերի իրավական դրությունը շատ ծանր է: Դա վոչ մի կերպ չի կարելի համեմատել մեր՝ Խորհրդային Միության գյուղացիական նույն շերտերի իրավական դրության հետ, վորտեղ ինքնությունը պատկանում է իրենց՝ աշխատավորներին և վորտեղ նրանք իրենք են տնօրինում իրենց բախտը: Փոխել գյուղատնտեսության մեջ գոյություն ունեցող ներկա կարգերը, դուրս քշել գյուղից արտրն ու գերանդին, վերացնել հողաբաժնությունը և մանր–մանրը, աբշին ու կեսանոց հողամասերը, գյուղ ներմուծել տրակտոր, շարքացան, կալսիչ մեքենա, հանքային պարարտանյութեր, կատուցել անասունների լավ գոմ, կիրառել անասունների լավացված կերակրում, խորացնել գյուղացիության մեջ գյուղատնտեսական ագրոնոմիա–

կան դիտելիքները,—սա սա լի սատկին հիմնական խնդիրը, վորը դրված և խորհրդային դյուղատնտեսական կոոպերացիայի առաջ:

Խորհրդային Միությունում այդ խնդրի լուծումը հնչանում և նրանով, վոր մեզ մոտ գոյություն չունի չահագործում և իրավազրկություն, ինչպիսիք տեղի ունեն կապիտալիստական յերկրներում: Գյուղատնտեսության զարգացումը մեզնում պետք և ընթանա ավելի արագ և ուժեղ, քան մյուս յերկրներում:

ՉՔԱՎՈՐ ՅԵՎ ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սակայն գյուղացիներն ուժ կունենա՞ն արդյոք միայնակորեն վերակառուցել իրենց գյուղատնտեսությունը: Նրանց հիմնական մասի համար անկասկած դա շատ դժվար կլինի: Գյուղական անտեսությունը հացահատ բարձր ապրանքի, կարող են միայն շատ ունևորները, իսկ չքավոր ու միջակ գյուղացիները դա կարող են ավելի արագ և ճշտությամբ անել միայն ընկերություններում և արտելներում միանալու, միայն գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով:

Մեր, Խորհրդային յերկրներում գյուղատնտեսական կոոպերացիան լայն չափով տարածվել և բավականաչափ զարգացել է: Այժմ դժվար թե ճարվի մի շրջան, վորտեղ չաշխատի վորևե կոոպերատիվ միություն: Մի շարք շրջաններում գյուղացիությունը համարյա ղլխովին կոոպերացված և գյուղկոոպերացիայի այս կամ այն միությունում: Վերջին տարիներում գյուղկոոպերատիվ միավորները զգալիորեն ամրացել են, ձեռք են բերել աշխատանքի փորձառություն, կատարել են միջոցների մասնակի կուտակում, ունեն իրենց կազմում քիչ թե շատ փորձված դեկավարներ՝ չքավոր ու միջակ գյուղացիության շարքերից, համախմբել են իրենց շուրջը ակտիվ ու առաջադեմ գյուղացիների և մի շարք տայոններում անցել են լուրջ ապրանքատուր աշխատանքների, այսինքն իրենց անդամների անտեսությունն բարձրը տարածանի հացահատ աշխատանքների:

Սակայն առաջին հերթին ո՞ւմ պետք է ներգրավեն և սպասարկեն այդ գյուղ-կոոպերատիվ միությունները:

Ցեվ ահա գյուղատնտեսական կոոպերացիայի յերկրորդ հիմնական խնդիրը հանդիսանում է՝ չքավոր ու միջակ գյուղացիության փոխադարձ ոգնության կազմակերպումը:

Գյուղատնտեսական ընկերություններն իրենց գլխավոր ուշադրությունը պետք է դարձնեն չքավոր գյուղացու, գեղջկուհու, այրի կանանց ոգնության, նրանց տնտեսության վերականգնման գործին: Կազմակերպիչները և գյուղատնտեսական կոոպերատիվների գլխավարները առաջին հերթին պետք է անդամագրեն գյուղի ամենակարիքավոր շերտին և միջակ գյուղացիներին, վորոնք ձգտում են լավացնել իրենց աշխատավորական տնտեսությունը:

Գյուղի այդ շերտերը դուրս մնալով կոոպերատիվից և գյուղատնտեսական ընկերությունից, կարող են յենթարկվել կուլակի, վաշխառուների շահագործման, վորոնք մեզ մոտ դեռ չի մեռել, խորամանկորեն ձգտում են իրենց ցանցի մեջ ձգել աշխատավորին:

Իսկ գյուղատնտեսական ընկերության միջոցով չքավորները և միջակները կարող են բարձրացնել իրենց տնտեսությունը, լավացնել իրենց բարեկեցությունը և ավելի հեշտությամբ խուսափել կուլակի շահամոլ և գիշատիչ ճանկերից:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԿՈԼԼԵԿՏԻՎ (ԱՐՏԵԼԱՅԻՆ) ՇԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ

Գյուղատնտեսական կոոպերացիան ոգնում է իր անդամներին՝ բարձրացնելու իրենց տնտեսության մակարդակը, ավելացնելու բերքատվությունը և կլիթ տնտեսության մեջ, ըստ վորում այդ ոգնությունն առաջին հերթին ցույց տրվում է չքավոր տնտեսություններին: Սակայն մեծ սխալ կլինի գյուղատնտեսական կոոպերացիայի կողմից, սահմանափակել իր աշխատանքը միայն այս յերկու խնդիրներով:

Հասցնել բարձր ստանձանի քան հինգ միլիոն ցրված ու մանր գյուղական տնտեսությունները—սա բացառիկ դժվարին խնդիր է:

Մեր յերկրում կան մոտ ութ միլիոն գյուղական տնտեսություններ, վորոնցում վոչ միայն հնարավոր չի ոգտագործել տրակտոր կամ կալսիչ մեքենա, այլ նրանք զուրկ են անգամ գյուղացիական մի նիհար յեզ գնելու հնարավորությունից: Այդ տիպի տնտեսություններում յեզ պահելը մնաս է. յեղը չի արդարեցնում իրեն, չունենալով լրիվ բեռնավորում:

Միանգամայն ակնհայտ է, վոր նման գյուղացիական տնտեսությունների բոլոր ջանքերը՝ ցրված և միայնակ ձևով հասնել ավելի բարձր ստանձանի—համարյա անհասանելի յե: Նրանց համար միակ յելքն այն է՝ միանալ ընկերություններում, արտելներում և կամ կոլտնտեսություններում, արտելային տեսակների վրա:

Դրա համար գյուղատնտեսական կոոպերացիայի յերբորդ և ամենագլխավոր խնդիրն է հանդիսանում՝ մեր գյուղատնտեսության լրիվ վերակառուցումը և դրա փոխանցումը կոլեկտիվ, արտելային ռելսերի վրա:

Ստրիպային գյուղատնտեսական կոոպերացիան ձգտում է գյուղատնտեսական արտադրություն կազմակերպել նույն հիմունքներով, ինչպես կառուցված է սոցիալիստական արդյունաբերական տնտեսությունը քաղաքներում, միայն այն տարբերությամբ, վոր ֆաբրիկանները և գործարանները ավյալ ֆաբրիկայի կամ գործարանի բանվորների կոլեկտիվի սեփականություն չեն, այլ կազմում են Ստրիպային Միություն ամբողջ աշխատավորության սեփականություն:

Իսկ գյուղում գյուղատնտեսական կոոպերացիան խնդիր է դնում կազմակերպել հացի, բամբակի և այլ յուրահատուկ գործարաններ, վորոնք (բացի հողից) կպատկանեն իրենց կոլեկտիվ դաշտերում աշխատող և համապատասխան կանոնադրությամբ միացված մի խումբ գյուղացիների:

Սակայն, չնայած այս տարբերության, աշխատանքի պայմանները և աշխատանքի կազմակերպումը կա-

նենա համարյա միևնույն բնույթը: Ինչպես բանվորը գործարանը չհամարելով իր անձնականն ու սեփականը, իր ամբողջ ուժն ու յեռանդը տրամադրում է պետական ձեռնարկությանը և դա բոլորովին չի պակսեցնում նրա յեռանդն ու աշխատասիրությունը, այնպես էլ գյուղում՝ ի՛մ տնտեսության, ի՛մ բաժին հողամասի, ի՛մ ձիու փոխարեն պետք է լինի՝ մե՛ր տնտեսությունը, մե՛ր արտը, մե՛ր ձին, և դա բոլորովին չպետք է պակսեցնի արտելում կամ կոլեկտիվում աշխատող գյուղացու յեռանդն ու աշխատասիրությունը:

Մի խոսքով, գյուղատնտեսական կոոպերացիայի գլխավոր նպատակն է՝ կազմակերպել գյուղում սոցիալիստական (համայնական) տնտեսություն:

Թե առաջին յերկու խնդիրները և թե մանավանդ յերրորդ գլխավոր խնդիրը գյուղատնտեսական կոոպերացիայի կողմից կիրագործվեն միայն այն դեպքում, յեթե նրան ողնի պետական սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը, յեթե գյուղի վերակառուցմանը, գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքներին ղեկավարի Համամիութենական Կոմ. կուսակցությունը, վորին նրա ստեղծող, ղեկավար և ուսուցիչ Վ. Ի. Լենինը կտակել է՝ հետամնաց, կիսաքաղցած և մութ գյուղը՝ վճռական և անշեղ կերպով տանել դեպի լույս, կուշտ, կուլտուրական մարդկային կյանք, տանել դեպի սոցիալիզմ:

ԻՆՉ ՆՈՐ ԲԱՆ Է ԱՍԵԼ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գյուղատնտեսության և գյուղատնտեսական կոոպերացիայի խնդիրներն այս կամ այն ձևով դրված են յեղել և դրված են Հ.Կ.Կ. բոլոր Համագումարներում: Մանավորապես Կոմկուսակցության 15-րդ Համագումարը գյուղկոոպերացիայի աշխատանքի խնդիրներին առանձին և բացառիկ ուշադրություն է նվիրել:

Համագումարը ամփոփեց այն բոլորը, ինչ ասված և գյուղում Կոմ. կուսակցության կողմից, յերկրի ա-

ամբ յուսարանեց գյուղի խորքերում կատարվող պրոցեսները, ապա նշեց այն ուղիները, որոնցով հետագայում պետք է ընթանա գյուղական բոլոր կազմակերպությունների աշխատանքները, նույն թվում և գյուղկոոպերացիայի աշխատանքները:

15-րդ համագումարը նշեց՝ որ գյուղատնտեսական կոոպերացիան մինչև այժմ շրջանների մեծ մասում իր խնդիրն և համարել գյուղացիության չքավոր և միջակ մասային ներգրավել իր շարքերը, իր անդամներին ապատարկել վարկավորման, հայթայթման, վաճառահանման ու մատակարարման բնագավառում, որ միայն հատ ու կենտ տեղերում է սկսված գյուղատնտեսության արտադրության բարձրացման աշխատանքը և գյուղատնտեսական բնակչության կողմից համարյա աչքաթող է արված չքավորության նյութական-տնտեսական ազնության ցույց տալու աշխատանքը, և որ գյուղատնտեսական կոոպերացիան շատ դանդաղ և թույլ է դնում դեպի իր գլխավոր նպատակի իրականացումը— գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը:

Այնքի մեծ ուշադրություն, այնքի մեծ ազնություն չքավորին, այնքի ուժեղացնենք գաչինքը միջակի հետ այնքի վճռական դիմադրություն կուլակին, այնքի համարձակ դեպի խոշոր կոլեկտիվ տնտեսություն—սրանք են ահա կամ. Կուսի 15-րդ Համագումարի հիմնական նշանաբանները, որոնք առաջադրված են գյուղատնտեսական կոոպերացիային:

Այն հարցի յուսարանումը, թե գործնականում գյուղատնտեսական կոոպերացիան ինչպես պետք է արդյունքի գյուղի առաջարկումը դեպի համայնական, կոլեկտիվ—սոցիալիստական տնտեսություն,—բարդ և խոշոր գործ է: Ներկա դրքի ելքերում այս հարցի վրա այնքի մանրամասն կանգ առնելու հնարավորություն չունենք, քանի որ այս դրքի նպատակն և քննության ենթարկել ուրիշ կարևոր և լուրջ հարց—գյուղկոոպերացիայի կողմից չքավորության մեջ տարվելիք աշխատանքի կարգի մասին:

ՀԻՍՆԱԿԱՆ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՅՈՒԹԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Չի կարելի ասել, վոր գյուղատնտեսական կոոպերացիան մինչև այժմ գյուղի չքավորության ոգնություն ցույց չի տվել:

Այդ ոգնությունը յեղել է: Ոգնություն տրված է: Չքավոր գյուղացուն ոգնել են և վարկով, և դուքանով, և գյուղատնտեսական մեքենաներով:

Սակայն, շատ հաճախ, թե վարկ, թե դուքան և թե գյուղատնտեսական մեքենա ստացող այդ չքավորը տնտեսապես բարձրացել է չափից դուրս թույլ և դանդաղ:

Ոգնության նման արդյունքն ասիթ և տալիս գյուղի կուլակի և ունևորի կողմից հետևյալ խոսակցությունը.—

«Խորհրդային իշխանությունը ոգնում է ձրիակերներին և ծուլերին, ոգնում է իզուր, վորովհետև մինուլնն և նրանցից ոգուտ չես ստանա»: Նման խոսակցությունները մեծ կասկածներ են ստեղծում նաև ստանձին միջակ գյուղացիների մեջ: Ստեղծվում ել մի տեսակ դժգոհ տրամադրություն, վոր իբր թե Խորհրդային Իշխանությունն այն միջոցները, վորը տալիս է չքավորներին, լավ կլիներ, յեթե տրամադրեր միջակային աշխատավորական տնտեսություններին,—այն ժամանակ և միջոցները չեյին վոչնչանա և ավելի շատ ոգուտ կլիներ:

Նրանք մտածում են—«Սա ինչ բան է, գյուղացի Սիմոնին տվեցին լծկանի վարկ, ոգնեցին նրան լծկան ստանելու, մի շաբաթ անցավ, յերկրորդում լծկանը սատկեց: Լծկանը չկա, իսկ վարկն ել հետ ստանալը բավականին դժվար է: Նույն Սիմոնին արտոնյալ յերկարատև վարկի կարգով տվեցին նոր «Սակկա» մարկայի դուքան, իսկ այժմ այդ դուքանը, ստանան դիտե, թե վորտեղ ընկած ժանգոտում ու փչանում է: Ել ինչպիսի արնտեսավոր է Սիմոնը, յերբ նա չկարողացավ լավ խնամել լծկանին, իսկ դուքանը պահել ինչպես հարկն է: Արդյոք

ճիշտ և փարիսում Կամկուսակցությունը և Խորհրդային Իշխանությունը, յերբ գյուղում աշխատող բոլոր կազմակերպություններից պահանջում է չքավոր գյուղացիներին ստանձնակարգ արտոնություններ և սպասարկում ցույց տալ»: Սիմոնի նման որինակներ գյուղում հազվագյուտ չեն:

Կարելի յե բազմաթիվ որինակներ բերել, յերբ չքավոր գյուղացուն շինարարության համար փայտ են տալիս, բայց նա վաճառում է հարևանին և ինքը մնում է նույն կիսաքանդ խրճիթում, կամ յերբ չքավորին տալիս են մարտը, յուղ ուրմացու, իսկ նա ցանում է կեղտոտը, փչացածը, կամ բոլորովին չի ցանում, քանի որ ուրմելու ժամանակ նա չի ունենում վոչ յուղ, վոչ վառ, վոչ բնակարանից ստացած և վոչ էլ սեփական ուրմացու:

Ինչումն է գործը:

Մի գուցե արդարացի յեն գյուղի կուլակ-փոխատուները, վորոնք խոսում են չքավորին տրվող ոգնության անմասության մասին, մի գուցե արդարացի յեն և այն ստանձին միջակները, վորոնք սկսում են մեծ կասկածանքով և թերահավատությամբ մոտենալ չքավորության: Մի գուցե Կոմ. Կուսակ. և Խորհրդային Իշխանությունն իսկապես սխալվում են՝ գյուղի չքավորությանը ստանձին հերթին ոգնություն ցույց տալով:

Իհարկե վոչ:

Կամկուսակցությունը և Խորհրդային Իշխանությունը ճիշտ են վարվում, յերբ գյուղական կոմունիստների ուշադրությունն ու ջանքերն ուղղում են չքավոր գյուղացիների ոգնության գործին: Յեվ մենք տեսնում ենք, ինչպես և գնում չքավորների արտոնության զարգացումը՝ նրանց ցույց տրված ոգնության հետևանքով: Ամբողջ հարցը կայանում է նրանում, վոր ստանձին չքավոր գյուղացի Սիմիոնին տրված ոգնությունը բավական չի յեղել նրա տնտեսությունը վառի կանգնեցնելու համար: Սիմոնի լծկանը ստակից վոչ թե նրա համար, վոր Սիմոնը վատ, ձրիակեր,

ծույլ տնտեսավար է, այլ նրա համար, որ Սիմոնի ստացած վարկը բավականացրեց միայն լծկան առնելուն, իսկ կերակրելու համար նա վոչինչ չուներ, և վերջապես տեղ էլ չկար կապելու. նա դամ չունի: նա պետք է խրճիթի հետևում մի աղքատիկ ծածկոց չիներ և լծկանը պաշտպաներ վատ յեղանակներից: Հակառակի պես այն շարաթը, յերբ Սիմոնի վատ կերակրած լծկանը կանգնած եր անպետք ծածկոցի տակ յեղանակները վատացան, լծկանը չկարողացավ դիմանալ և սատկեց:

Լծկան ունենալը Սիմոնի ուժից վեր դուրս յեկավ: Նա վոչ միայն չփրկեց Սիմոնի տնտեսությունը, այլ վերջնականապես քայքայեց նրան ու Սիմոնը առաջվա նման լծկան չունի և հարյուր քսան ռուբլի պետք է վճարի «Վարկոռպին»:

Այն չքավոր գյուղացին, որը ծախեց արտոնյալ պայմաններով ստացած չինությունը, այդ արեց վոչ թե իր ծուլության ու անտնտեսավարության հետևանքով և ցանկացավ ապրել մութ, կիսաքանդ խրճիթում, այլ այն պատճառով, որ ընտանիքը կերակրելու համար, նրան առաջին հերթին հարկավոր եր կով, որը գնելու համար նա Վարկոռպից չկարողացավ վարկ առանալ:

Կան, իհարկե, գյուղում հարբեցողներ, ձրիակերներ և ծույլեր: Կամ. կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը հոգ են տանում վոչ նրանց մասին. գյուղի չքավորության հիմնական մասսան նրանք չեն կազմում: Այդ գիտի ամեն մի ազնիվ աշխատավոր գյուղացի;

Չքավոր գյուղացիների հիմնական մասսան կազմող սակավահողները, առանց աշխատավորի կամ հիվանդ ու հաշմանդամ միակ կերակրող ունեցող բազմանդամ ընտանիքներն յերբեք չեն մտածում՝ ծուլության, հարբեցողության կամ ձրիակերության մասին:

Գյուղացիության այդ մասսայի տնտեսության մեջ պետք է միայնդամից յերկար ժամանակով խոշոր միջոցներ դնել, քանի որ փոքր ոգնությունն ու ոժանդակությունը միչտ էլ դուրս չի բերում ծանր կացությունից:

Սմեն մի չքավոր տնտեսության մեջ միանգամից մոցնել խոշոր միջոցներ այն ժամանակ, երբ չքավորների թիվը Սովետային Հանրապետություններում հասնում է մինչ տասը միլիոնի—սա անիրագործելի խնդիր է: Եվ բացի այդ, նման ոգևորության և աջակցության դեպքում գյուղի դարպացումն ու վերելքը կնթանա չատ դանդաղ, քանի որ գյուղատնտեսության նման դարպացումը կկնար միայնակ, կամ ինչպես ասում են, անհատական հիմունքներով:

Մինչ դեռ Կոմունիստական Կուսակցության և Սովետային Իշխանության նպատակն է կազմակերպել այնպիսի գյուղատնտեսական արտադրություն, որը կարող կլինի դարպանալ հեշտ ու արագ, և տնտեսական բարձր վերելքի համար կունենան բոլոր տվյալները. Հետևապես գյուղական չքավորության տնտեսական-ֆինանսական ոգնությունը, պետք է կազմակարպված լինի մի ինչ այլ հիմունքներով· առանձին չքավոր արտեսության ոգնելուն զուգընթաց հիմնական ուշադրություն պետք է դարձնել համախմբելու չքավոր գյուղացիներին համայնական, ընկերային և արտելային տնտեսություններում, սկզբում թեկուզ ամենահասարակ ձևի, *իսկ այնուհետև գյուղատնտեսական ընկերության և շրջապատող կազմակերպությունների հետագա ոգնությամբ, այդ պարզ կոլեկտիվ մեքենան ինքը կանդնի կոլեկտիվացման ավելի բարձր աստիճանի:*

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐԸ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ — ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՈՊԵՐԱՑՈՒՄՆ Է

Գյուղատնտեսական կոոպերատիվը բարեգործական կազմակերպություն չէ: Գյուղատնտեսական կոոպերատիվը տնտեսական կազմակերպություն է, որն աշխատում է ինքնահատուցման և տնտեսական հիմունքներով:

Գյուղատնտեսական կոոպերատիվը մի կազմակերպություն է, որը բարկացած է գյուղացիական տնտե-

սությունների ներկայացուցիչ առանձին անդամ–փայ-տերերից, որոնք գյուղատնտեսական կոոպերատիվ են կազմակերպել նրա համար, որ վերջինը գերազանցապես սպասարկի իր անդամ փայատերերին, նախ և առաջ ոչնչելով գյուղատնտեսության արտադրության զարգացմանը, ինչպես և առաջին հերթին իր անդամ–փայատերերի տնտեսության դարգացման:

Այս բոլոր հիմունքները մնում են ճիշտ, անվիճելի և անխախտ նաև գյուղատնտեսական ընկերության կողմից իր գլխավոր խնդիրներից մեկի, այն է՝ առաջին հերթին չքավոր գյուղացիների սպասարկումն իրագործելու ժամանակ:

Գյուղատնտեսական կոոպերատիվը չի կարող, չպետք է և իրավունք էլ չունի իր միջոցները բաժանել կոոպերատիվին քիչ ծանոթ, կոոպերատիվի հետ վոչ մի կապ չունեցող, կոոպերատիվի գործերի համար վոչ մի պատասխանատվություն չկրող առանձին գյուղացիական տնտեսություններին: Պարզ ասած, գյուղատնտեսական ընկերությունը չի կարող լուրջ տնտեսական-նյութական ոգնություն հասցնել այն չքավոր տնտեսություններին, որոնք այդ կոոպերատիվի անդամ–փայատեր չեն: Եվ միայն այն դեպքերում, երբ իր անդամ–փայատերերի կարիքն ու պահանջը լրիվ չափով բավարարված կլինեն, իսկ ընկերությունն ազատ միջոցներ (դրամական կամ նյութական) կունենա, այն ժամանակ միայն ընկերությունը կարող է՝ վոչ–կոոպերացված չքավոր տնտեսություններին վորոշ տնտեսական–նյութական ոգնություն ցույց տալ: Սակայն այդ կլինի վոչ թե ընդհանուր կարգով, այլ վորպես բացառություն ընկերություններում գոյություն ունեցող կարգ ու կանոնից:

Ի՞նչպես վարվել այդ դեպքում. ի՞նչպես կապել այդ Կոմունիստական Կուսակցության և Խորհրդային Իշխանության կողմից չքավորներին ամեն կերպ ոգնելու մասին տրված հրահանգների հետ:

Ցելքը շատ պարզ է: Գյուղատնտեսական ընկերությանն անհրաժեշտ է ներգրավել իր անդամ–փայատերերի շարքերը շրջապատի գյուղերի չքավոր գյուղացի-

ներին և ընկերության աշխատանքներում հիմնական ուշադրություն դարձնել նրանց տնտեսա-նյութական սպասարկմանը:

Կոմունիստական Կուսակցության 15-րդ համագումարը գյուղատնտեսական կոոպերացիայի առաջ դրել է հետևյալ խնդիրը. մոտ ժամանակաշրջանում չքավորությանը հարյուր տոկոսով յենթարկել կոոպերացման: Ինչպե՞ս իր անդամ-փայատերերի շարքը ներգրավել չքավոր գյուղացիներին, յերբ նրանց մեծ մասի համար չափազանց դժվար է մուծել մուտքի և փայավճար, մանավանդ՝ այդ մուծումները բավականին մեծ են և սովորաբար կազմում են 11 ռուբլի (մուտքի՝ մեկ ռուբլի և փայավճար՝ տասը ռուբլի):

Վորտեղից պետք է չքավորը միջոցներ գտնի գյուղատնտեսական կոոպերատիվում անդամագրվելու համար:

Մուտքի վճարը (մեկ ռուբլի) չքավորը մի կերպ կարող է ճարել և մուծել: Իսկ ինչ վերաբերում է փայավճարին, գյուղատնտեսական կոոպերատիվը ինքը պետք է ողնության գա չքավորին:

Գյուղատնտեսական կոոպերատիվների մեծ մասում գոյություն ունի այսպես կոչվող չքավորության կոոպերացման ֆոնդ. այդ ֆոնդերը կազմվում են լրացուցիչ վճարման ֆոնդի մասհանումներից, կոոպերատիվների մաքուր շահից, և նպատակը կայանում է նրանում, որ ողնեն գյուղի չքավորության անդամագրվելու գյուղատնտեսական ընկերության: Չքավոր գյուղացին կարող է գյուղատնտեսական կոոպերատիվի վարչությանը դիմում տալ և չքավորության կոոպերացման ֆոնդից փոխառություն խնդրել իր անդամությունն ընկերությունում ձևակերպելու համար: Դիմումի հետ պետք է ներկայացվի մուտքի վճարը: Յեթե կոոպերացման ֆոնդը ընկերությունում չի ստեղծած, յեթե գիմոց չքավորը հայտնի յե տեղի հասարակական և պետական կազմակերպությունների վորպես իրոք աշխատավոր գյուղացի, այդ դեպքում չքավոր գյուղացու դիմումը կարելի յե բավարարել, և գիմոց չքավորի փոխարեն չը-

Բավորության կոպերացման Ֆոնդից մուծվում և մասամբ որպես փայավճարի կեսը*):

Այդ մուծումը նվեր կամ նպաստ չէ, այլ անտոկոս յերկարատև (Միութենական ժողկոմխորհի 28 թ. սեպտեմբերի 7-ի վորոշմամբ վոչ պակաս յերեք տարի ժամանակով) փոխառություն՝ չքավոր գյուղացուն: Փայավճարի յերկրորդ կեսը վարչության հատուկ վորոշմամբ նույնպես հետաձգվում է յերկար ժամկետով—յերեքից մինչև հինգ տարի: Վարչության վորոշած ժամանակամիջոցում չքավոր գյուղացին այդպիսով վճարում է փայավճարի մուծման համար իրեն տված վարկը և փայավճարի յերկրորդ կեսը մուծում է իր միջոցներից:

Չքավոր գյուղացիների կոոպերացումը հեշտացնելու և նրանց փայավճարի պարտքը մարելու համար, բացի կոոպերացման Ֆոնդից տրված փոխառությունից, ճիշտ աշխատող գյուղատնտեսական կոոպերատիվները ցույց են տալիս և այլ ոգնություն: Չքավոր գյուղացուն կոոպերատիվը մի վորևե աշխատանք և տալիս և աշխատավարձի մի մասը պահում՝ նրա փայավճարի պարտքը մարելու համար: Բացի այդ, գյուղփոկերը կարող են իրենց միջոցներից մուծել չքավոր գյուղացու փայավճարը:

Աշխատանքի այս կարգը ոգնում է չքավորության վրաքի կանգնելու և նեղդրավելու նրան համայնական արտելային տնտեսության հունի մեջ:

ՆՅՈՒԹԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Գյուղկոոպերացիայի կծով չքավորության մեջ տարվող աշխատանքի հետևյալ շրջանը, կոոպերացումից հետո՝ հանդիսանում է չքավորության տնտեսական ոգնության կազմակերպումը:

Այդ աշխատանքների նպատակն է՝ բարձրացնել կոոպերացված չքավորության բարեկեցությունը, նրա

---

*) Համամիութենական ժողկոմխորհի 1928 թ. սեպտեմբերի 7-ի վորոշմամբ գյուղատնտեսական կոոպերացիայի շահերից տրվող մասահանումը տարեկան սահմանված է 15 տոկոս:

կուլտուրական մակարդակը և գյուղկոոպերացիայի այն բոլոր աշխատանքները, վորոնք նպաստում են չքավոր գյուղացիության համախմբմանը՝ պարզ և ավելի բարդ կոլեկտիվներում:

Վորովհետև գյուղատնտեսական կոոպերացիան ունի մի քանի հիմնական ֆունկցիաներ կամ աշխատանքի բնագավառներ, ակներև է, վոր ամենից հարմար կլինի պարզաբանել այն հնարավորությունները, վորոնք ունի գյուղկոոպերացիան իր աշխատանքների առանձին բնագավառներում չքավորության ոգնության համար:

ՎԱՐԿԸ

Գյուղկոոպերացիայի աշխատանքի հիմնական բնագավառներից մեկը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրության վարկավորումը:

Վարկը գյուղատնտեսական կոոպերացիայի ձեռքում կարող է հանդիսանալ և հանդիսանում է չափազանց ուժեղ, անդամ ամենաուժեղ հենարանը, վորի ոգնությամբ հնարավոր է վերակառուցել ամբողջ գյուղատնտեսական արտադրությունը՝ նոր հիմունքներով: Նա, ում ձեռքում գտնվում է վարկը, միանգամայն ազատ կարող է ոգնել և զարգացնել գյուղատնտեսության արտադրության այս կամ այն ճյուղը, կամ տնտեսության այս կամ այն ձևը:

Պարզենք քիչ ավելի մանրամասն:

Տրամադրելով բոլոր վարկային միջոցները կաթնատնտեսության զարգացման գործին, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կարելի յե ավյալ շրջանում կաթնատնտեսական ճյուղը բարձրացնել և վոտքի կանգնեցնել: Յեթե սկսել առանձնապես ուժեղ և հատուկ արտոնյալ պայմաններով վարկավորելու կոլեկտիվ միություններին (արտելներ, կոմմունաներ), յեթե շրջապատի գյուղացիությունը չահագրգռել հիշած կոլեկտիվների արտոնյալ վարկավորումով, անշուշտ կարելի կլինի զգալի գրական արդյունքների հասնել՝ թե արդեն գոյություն ունեցող կոլեկտիվներում և թե աջակցել նորերի կազմակերպման:

ՀԱՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

Ա II 23599

Մի խոսքով, վարկը իսկապես լուրջ ուժ է, որի ոգնությամբ կարելի է ազդել շրջապատի գյուղացիության վրա, և այնպես փոխել գյուղի դեմքը, ինչպիսին անհրաժեշտ է սոցիալիստական հասարակության կառուցման համար:

Վարկային ֆունկցիաներ ունեցող գյուղատնտեսական կոոպերատիվներից շատերը պարզ չեն պատկերացնում գյուղատնտեսական վարկի ամբողջ ուժն ու նշանակությունը:

Շատ գյուղատնտեսական ընկերություններ իրենց վարկային աշխատանքին մոտենում են որպես սովորական առևտրական ոպերացիայի, նրանք համարում են, որ դրամը՝ դա ապրանք է, որը պետք է շահավետ ոգտագործել և արդարացնելով ծախսերը, մի քիչ էլ վաստակել:

Նման ընկերությունները վարկային միջոցները, որպես փոխատվություն տրամադրում են ունևոր գյուղացիներին, հաշվելով դրամի ոգտագործման այդ ձևն ավելի ապահով իրենց վերադարձնելու տեսակետից, և նշանակում է ընկերության համար ավելի ոգտավետ:

Նման գյուղատնտեսական վարկային ընկերությունների վարկային աշխատանքը վոչնչով չի տարբերվում կապիտալիստական, բուրժուական կոոպերատիվների աշխատանքից: Կապիտալիստական յերկրներում վարկը ծառայում է մասնավոր սեփականատիրական և առաջին հերթին խոշոր կալվածատիրական, խոշոր-կուլակային տնտեսության զարգացմանը:

Բուրժուական կապիտալիստական կոոպերատիվներում վարկային ոպերացիաներն իրոք հանդիսանում են դրամի առևտրական ոպերացիա և ուղղված են հասարակության այնպիսի չերտերի պաշտպանությանը, որոնք կապիտալիստական կարգերի հիմքն են հանդիսանում (կալվածատերեր, ֆաբրիկանտներ, կուլակներ): Խորհրդային գյուղատնտեսական կոոպերացիան, որը հետապնդում է միանգամայն այլ նպատակներ, այն է համայնական, սոցիալիստական տնտեսության կառուցում, յերբեք չպետք է զբաղվի դրամի առևտրով, ունե-

վորնելի և կուլակների վարկավորումով, ինչպես այդ նկատվում և առանձին դեպքերում: Գյուղատնտեսական կոոպերատիվների նման թեքումների դեմ կտրուկ կերպով պետք է պայքարել:

Վարկը պետք է ուղղվի առաջին հերթին կոլեկտիվ կազմակերպությունների ոգնության գործին. երկրորդ՝ անհատ չքավորական և ապա միջակ գյուղացիական տնտեսություններին:

Գյուղատնտեսական վարկային ընկերություն պետք է ոգնի հետամնաց չքավորական տնտեսություններին, թեկուզ մի փոքր լավացնելու իր տնտեսական վիճակը: Մեր յերկիրը բավականաչափ հարուստ չէ, վոր կարողանա լրիվ բավարարել գյուղի գյուղատնտեսական վարկի կարիքն ու պահանջը: Վարկային միջոցները բաց են թողնվում վոչ բավարար չափով: Գյուղվարկային ընկերություններում միշտ էլ կան մեծ քանակությամբ վարկով չբավարարված չքավորների դիմումներ: Սակայն սխալ կլինի և այն, յեթե թեքում լինի մյուս կողմը,—յեթե վարկային ընկերություն վարկային միջոցները բաշխի անդամ-փայատերերի միջև այն հաշվով, վոր վոչ վորի դժգոհություն պատճառած չլինի:

Նման դեպքում սխալն առաջին հերթին նրանում կլինեք, վոր տնտեսական տարբեր շերտի պատկանող գյուղացի անդամ-փայատերերը հավասար չափով վարկ կստանային: Յենթադրենք, վոր թե ունևորը, թե միջակը և թե չքավորը ստանային քանհնդական ռուբլի: Միտեղամայն պարզ է, վոր վարկի նման բաշխումը անմտություն կլիներ: Ունևորը ստացած դումարը կարող է ոգտագործել իր, առանց այն էլ ամուր տնտեսությունն էլ ավելի ուժեղացնելու համար, իսկ չքավորին չի բավականացնի անդամ իր ամենաանհրաժեշտ պահանջը բավարարելու համար:

Բացի այդ, այսպիսի հավասարեցուցիչ բաշխումը ճիշտ չեր լինի և նրա համար, վոր փոխատվություն չրն-

չին լինելու պատճառով դրա ազդեցությունը տնտեսության վրա չեր յերևա: Դրանով հնարավոր չի մի վորևե լուրջ գնում (ձի, կով, կամ լավ մեքենա) կատարել: Կարելի յե համոզված լինել, վոր փոքր գումարի փոխանակությունն յերբեք չի ոգտագործվում տնտեսության արտադրական նպատակին, այլ ծախսվում և սպառողական կարիքների համար:

Այստեղից պարզ և այն յեզրակացությունը, վոր անհրաժեշտ և վարկային միջոցները բաշխել առաջին հերթին գյուղացիության ավելի կարիք զգացող մասին, այսինքն չքավորներին և այն չափով, վոր տնտեսությունը զգա այդ փոխառության ազդեցությունը, վոր նա թեկուզ մի աստիճան վեր բարձրանա:

Բավարարել խոշոր վարկով բոլոր կարիք ունեցող անհատական տնտեսություններին, ինչպես վերևում և ասված,—Խորհրդային պետությունը չի կարող. դրա համար նպատակահարմար և վարկը տրամադրել չքավոր կամ միջակ գյուղացիներից կազմած խմբակներին:

Կոլեկտիվին տրված վարկի խոշոր լինելու հետևանքով դրական արդյունքներն ավելի շատ կլինեն:

Չքավոր կամ միջակ գյուղացին՝ կոլեկտիվում կամ արտելում աշխատելիս ավելի արագ և ավելի պարզ կզգա իր դրության լավացումը, քան այն ժամանակ, յերբ աշխատի առանձին, չնչին միջոցներով և վարկով կառուցի իր տնտեսությունը: Փոխանակ նրա, վոր տասն անհատ տնտեսություններ առնեն տասը դուքան (ամեն մեկն մի դուքան) կարելի կլինի բավականանալ չորսով, հինգով, յեթե այդ տասը տնտեսությունը միանան կոլեկտիվում, իսկ մնացած դուքաններին տրվելիք դրամը կոգտագործվի տնտեսական այլ կարիքների համար: Գյուղատնտեսական ընկերությունը կոլեկտիվներին կարող և և պետք և բաց թողնի վարկային միջոցներ ավելի շատ գումարով, յերկար ժամկետով և ավելի ցածր տոկոսով, քան անհատական, թեկուզ և չքավորական տնտեսության:

Վարկային ընկերությունները շատ հաճախակի կատարում են մեկ ուրիշ սխալ, յերբ չքավորներին տրվող փոխատվությունը բաց են թողնում ունևորների յերաշխավորությամբ:

Թվում է թե վոչ մի սխալ բան չկա այստեղ: Վարկը գնում է դյուղացիության չքավոր շերտին: Ընկերությունը չի կիրառում հավատարեցման սկզբունքը: Նա միայն ցանկանում է ապահովել փոխատվությունը ժամանակին և կանոնավոր վերադարձնելը (մարումը):

Թվում է, թե նման դրությունը և ճիշտ է և տնտեսավար:

Սակայն գործնականում այլ բան է դուրս գալիս: Վարկավորման այդ ձևը չքավոր գյուղացուն շատ հաճախ ուղակի գցում է կուլակների տնտեսական ծանր ճնշման, ստրկության տակ:

Չքավոր գյուղացին նախ հազար ու մի խնդրանքով ու պաղատանքով պետք է ստանա ունևոր դրացիների յերաշխավորությունը, և յեթե նրանք հզոր հովանավորների դիտավորությամբ կհամաձայնեն յերաշխավորելու չքավորին, վերջինը միշտ էլ պետք է պարտավոր զգա իրեն, իրավունք չունենալով յերբեք ձայնը բարձրացնելու իր «բարեգործների» վրա, նրանց դեմ դուրս գալ ժողովներում, բացարկել նրանց թեկնածությունը Խորհրդում կամ կոոպերացիայում և մինչև անգամ դատարանում նրանց դեմ հակառակ վկայություն տալ:

Գյուղատնտեսական վարկային ընկերությունն այնպես պետք է վարկավորի չքավոր գյուղացիներին, որ առաջին հերթին նպաստի նրանց մոտեցման և միացմանը համայնական կոլեկտիվ կազմակերպություններում, ընդ որում հասկանալի յե, որ այդ միացումը պետք է լինի միանգամայն կամովին, հեռու ստիպողական ձևերից: Գյուղատնտեսական վարկային ընկերությունը պետք է ոժանդակի և գյուղական անհատ ունևորությունների բարձրացմանը, նրանց քիչ թե շատ յերկար

ժամանակով՝ ցածր տոկոսով և զգալի գումարի փոխատվություն տրամադրելով:

Փոխատվությունները ճիշտ ժամանակին և կանոնավոր հետ ստանալու համար, ընկերության վարչությունը սերտ կապով պետք է կապված լինի փոխառուների հետ, լավ ճանաչի նրանց տնտեսությունը և գործակցի գյուղփոկերի հետ:

Բացի սովորական վարկային միջոցներից, որոնք կազմում են վարկային ընկերության ընդհանուր ֆոնդը, Խորհրդային իշխանության կողմից, թե կենտրոնում և թե տեղում կազմված է գյուղի չքավորության յերկարատև վարկավորման հատուկ ֆոնդեր: Այդ ֆոնդը գոյություն ունի բոլոր գյուղվարկային ընկերություններում և նշանակված է բացառապես գյուղացիական չքավոր տնտեսությունների արտադրական արտոնյալ վարկավորման համար:

Արտադրական վարկավորում—նշանակում է այնպիսի վարկավորում, որը տրամադրվում է բանվոր անասուն (ձիեր, յեզներ), արտադրական գործիքներ (գութաններ, փոցխեր մեքենաներ) և արդյունաբերող անասուն (կովեր, վոչխարներ, խոզեր) գնելու համար: Վարկի ոգտագործման ժամանակը սահմանվում է յերեք տարուց վոչ պակաս՝ գյուղատնտեսական ինվենտարը և մանր արդյունաբերող անասուն գնելու համար, և հասնում է մինչև հինգ տարի բանվոր անասուն գնելու համար:

Նշած ժամանակամիջոցում գյուղացի չքավորը միանգամայն ազատ կարող է լավացնել իր տնտեսական դրությունը և վարկը ժամանակին վերադարձնել:

Ի ,ումն սրան, Խորհրդային կառավարության հատուկ վորոշմամբ չքավորական վարկի տոկոսը սահմանված է տարեկան 6-ից վոչ բարձր: Բացի այդ, ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի 1928 թ. սեպտեմբերի 7-ի վորոշմամբ, կազմակերպված է չքավորական նոր ե՛լ ավելի արտոնյալ վարկավորման ֆոնդ: Այդ ֆոնդը

կազմվում և հետևյալ կերպ. 1928–29 բյուջեական տարում անհատական գյուղացիական տնտեսությունների վարկավորման համար բաց թողնված միջոցների 40 տոկոսից վոչ պակաս պետք է տրամադրվի չքավոր տնտեսություններին, այսինքն պետք է առանձնացվի՝ վորպես չքավոր տնտեսությունների վարկավորման հատուկ ֆոնդ։ Սակայն այդ ֆոնդի կեսը (50 տոկոսը) պետք է ոգտագործվի չքավոր տնտեսությունների բացառապես արտադրական կարիքների համար (ձիու, դութանի և այլն), հատուկ արտոնյալ պայմաններով (ոգտագործման ավելի յերկար ժամկետով և վոչ ավել տարեկան 4 տոկոսից)։

Վարկային ընկերությունն ունենալով նման ֆոնդ, ավելի ուշադիր պետք է վերաբերվի նրա ճիշտ ոգտագործումը։ Չքավորական ֆոնդը վոչ մի դեպքում չպետք է ոգտագործվի այլ նպատակների համար. դա յենթակա յե քրեական խիստ պատասխանատվության։

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեության յերկրորդ հիմնական բնագավառը հանդիսանում է մատակարարման աշխատանքը։

Գյուղատնտեսական ընկերությունն իր անդամներին մատակարարում է գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, սերմացու, պարարտանյութեր և գյուղատնտեսության համար անհրաժեշտ մի շարք այլ առարկաներ։ Կոոպերատիվի մատակարարման աշխատանքի վորակի հետ և կապված անդամների տնտեսական զարգացումն և այդ զարգացման ուղղությունը։ Այլ կերպ ասած, յեթե գյուղատնտեսական կոոպերատիվի աշխատանքը լավ և դրված, այդ դրական և անդրադառնում նրա անդամների բարեկեցության մակարդակի բարձրացման վրա։ Բացի այդ, ընկերության մատակարարման աշխատանքներից և կախված այն, թե ինչ հիմունքներով, ինչ ուղղությամբ և դարգանում

տվյալ շրջանի գյուղատնտեսությունը։—ընկերությունը ոժանդակում է միայն անհատական տնտեսության զարգացման, թե՞ նա առաջին հերթին խրախուսում է տնտեսության կոլեկտիվ ձևերի զարգացումը, միաժամանակ աջակցելով նաև անհատ տնտեսության աշխատանքներին։

Ընկերության վարչությունը չի կարող կուրս վերցնել գյուղի ունևորի և կուլակի տնտեսություններին մեքենաներ և այլ անհրաժեշտ առարկաներ մատակարարելու։ դա միանդամայն սխալ կլինի։ Նա առաջին հերթին պետք է ոգնի ավելի կարիք ունեցող տնտեսություններին, քանի վոր այդ բղխում է կոոպերացիայի հիմնական նպատակներից։

Հետևապես, ընկերությունն իր մատակարարման աշխատանքներին նույնպես չպետք է մոտենա առևտրական տեսակետից։ Մատակարարման աշխատանքը, ինչպես և վարկայինը, գյուղատնտեսության արտադրության բարձրացման, նրա կոլեկտիվ հիմքերով վերակառուցման հիմնական հենարաններից մեկն է հանդիսանում։

Ի՞նչ ձևով գյուղատնտեսական ընկերության վարչությունը կարող է ոգնել չքավորությանը մատակարարման աշխատանքներում։ Ի՞նչ պետք է նկատի ունենա ընկերությունն իր անդամներին մեքենաներ, գործիքներ, սերմորայք և պարարտանյութեր մատակարարելիս։

Մատակարարման ամբողջ աշխատանքը նախ և առաջ պետք է ուղղված լինի գյուղացիության ամենակարիքավոր շերտերի պահանջների բավարարման։ Ծրագիրը կազմելիս ընկերության վարչությունը հաշվի պետք է առնի մեքենաների և այլ գործիքների պահանջը չքավոր գյուղացիության կողմից։ Այնուամենայնիվ անդամների պատվերները ձևակերպելիս, կանխավճարների մուծման այնպիսի կարգ պետք է սահմանել, վորը ամենամեծ արտոնություններ վերապահի

չքավորությանը, այն է՝ չքավորի կողմից մուծվելիք ամենան ունևորներից անհամեմատ պակաս պետք է լինի: Մի շարք ընկերություններում պատվերները ձևակերպելիս, կանխավճարների խնդրում բոլոր շերտերի վերաբերմամբ ել միևնույն մոտեցում և տեղի ունենում: Չքավոր Սիմոնը փոցխի համար մացնում է կանխավճար տասնհինգ ռուբլի, միջակ Հովհաննեսը նույնպես տասնհինգ ռուբլի յե տալիս, նույնը և ունևոր դյուղացի Պողոսը:

Միանգամայն ակնհայտ է, վոր պատվերների ձևակերպման այդ կարգը անիրավացի յե. յեթե այդ կարգն ունևորի համար շատ հեշտ է, միջակի համար տանելի, ապա չքավորի համար միանգամայն դժվար և և նրա ուժից վեր, հետևապես և անտանելի: Չքավորը կամ պետք է հրաժարվի փոցխ գնելուց, աշխատանքների ժամանակ ոգտվի հարևան դյուղացու փոցխից և դրանով ունևորից կախում ունենա, կամ ել փոցխը գնելու համար ստիպված պետք է լինի իր տնտեսությունից մի վորևե բան ծախել: Իսկ չքավորի տնտեսությունն այն դրության է, վոր հազիվ թե հնարավոր լինի մի բան այնտեղից ծախել:

Ի՞նչ անել:

Ընկերությունը հաշվի առնելով իր անդամների գնողական տարբեր ունակությունը, տարբեր ել մոտեցում պետք է ունենա նրանց պատվերները ձևակերպելու ժամանակ: Այլ կերպ ասած, ընկերության վարչությունը պետք է բարձրացնի ունևորից առանալիք կանխավճարի չափը, և ընդհակառակը թույլ և չքավոր տնտեսություններինը պակասեցնի, իսկ մուծելու համար հարկավոր է սահմանել յերկու, յերբեք ժամկետ այն հաշվով, վոր ինչքան հնարավոր է շատ դյուրություններ տրվեն չքավոր դյուղացուն անհրաժեշտ գործիքներ ձեռք բերելու:

Որինակ՝ վարչությունը պետք է չքավոր Սիմոնից փոցխի համար կանխավճար վերցնի հինգ ռուբլի, մի-

ջակ Հովհաննեսից՝ տասը ռուբլի, իսկ ունևոր Պողոսից քսան–քսանհինգ ռուբլի:

Վերատուգիչ հանձնաժողովները պետք և հետևեն, որ այդպիսի տարբեր մոտեցման ժամանակ բարեկամական, ազգակցական կապերը դեր չխաղան, այլ միակ յելակետ ունենան ավելի կարիքավորներին ողնելու անհրաժեշտությունը:

Մատակարարման աշխատանքների մեջ կարգ մտցնելու համար, ի նկատի ունենալով գյուղատնտեսության ուժեղ զարգացման անհրաժեշտությունը, և ձգտելով հեշտացնելու գյուղացիության կողմից գյուղատնտեսական ինվենտարի և մեքենաների գնումը, Խորհրդային կառավարությունը մշակել և հաստատել վարկավորման տախտակ՝ գյուղատնտեսական մեքենաների և գործիքների վաճառման համար: Այդ տախտակում նշանակված են մեքենաների գները և վարկավորման ժամկետները: Վարկավորման տախտակը պարտադիր որենք պետք և լինի ընկերության վարչության համար:

Այդպիսով գյուղատնտեսական ընկերության վարչությունը մատակարարման աշխատանքների ժամանակ, իր որամադրության տակ ունի մեծ հնարավորություններ տնտեսապես ողնելու իր անդամներին, ողնելու նրանց ապատվել չահագործող տարերից, բարձրանալ զարգացման ավելի բարձր աստիճանի: Այդ հնարավորությունները կայանում են հետևյալում.

1. առաջին հերթին բավարարելու չքավորական տնտեսություններին մեքենաներով, գործիքներով, սերմերով և պարարտանյութերով.

2. պատվերների ձևակերպման ժամանակ, մյուս կատեգորիաների համեմատությամբ չքավորներից ստացվող կանխավճարի ավելի պակաս դումար սահմանելը.

3. համեմատած վարկավորման տախտակին, մեքենաների և գործիքների բաշխելու ժամանակ չքավորների նկատմամբ ավելի յերկար ժամկետ սահմանելը և

4. Հրավոր գյուղացիների համար վարձակալության մեքենաներից օգտվելու հնարավորություն ստեղծելը:

Սակայն մատակարարման աշխատանքների բնագավառում այն բոլոր հնարավորությունները, վոչոնց մասին ասացինք, վերաբերվում և գյուղացիական անհատական տնտեսություններին: Մինչդեռ սկզբում մենք ընդունեցինք, վոր ընկերության աշխատանքը հրավորի ոգնության գործում պետք և բղխի մանր-ցրված հրավորական տնտեսությունները խոշոր կոլեկտիվներում ներդրավելու հիմնական յելակետից, քանի վոր միայնակ, մանավանդ մանր գյուղացիական տնտեսությունների համար գործադրել ու բարձրանալ ավելի դժվար և, քան խոշոր, այն և կոլեկտիվ տնտեսությունները:

Ինչպես պետք և վարվի ընկերությունը մատակարարման աշխատանքներում նաև հրավորներին ոգնություն ցույց տալու գործում: Ինչպես համաձայնեցնել գյուղի հրավորի ոգնությունը գյուղացիական տնտեսության կոլեկտիվացման գծի հետ՝ մեքենաները, գործիքները, սերմացուն և պարարտանյութեր բաշխելու ժամանակ:

Նախ՝ կոլեկտիվների բոլոր պահանջները ու պահվելները պետք և բավարարվեն անհատ տնտեսությունների պահվելից առաջ. բացի այդ, բաշխման պայմանները (նախապատվությունը, վարկավորման ժամկետները) կոլեկտիվ կազմակերպությունների համար պետք և լինեն և ավելի արտոնյալ, քան անհատ տնտեսություններինը:

Այդ յերկու ձևերը միմյանց կարող են ոժանդակել կոլեկտիվ կազմակերպությունների և տեսակների աճեցման ու զարգացման: Սակայն, բացի այդ, ընկերության վարչությունը պարտավոր և խոշոր գյուղատնտեսական մեքենաները բաշխել բացառապես գործություն ունեցող և նոր կազմակերպվող կոլեկտիվ կազմակերպություններին: Անհատ տնտեսությունները խոշոր մեքենաներ չպետք և ստանան:

Ի՞նչու.

Խորհրդային իշխանությունը և Կոմունիստական Կուսակցությունը բոլորովին դեմ չեն անհատ տնտեսությունների զարգացմանը: Ընդհակառակը, Կենտրոնական Կոմիտեի պլենումը (1928 թ. հուլիս) ամբողջ վճռականությամբ ընդգծեց, վոր գյուղատնտեսության զարգացման խնդրում կուսակցության դիծը պետք է լինի հետևյալը.—

«Ապահովել մանր և միջակ գյուղացիական անհատական տնտեսությունների արտադրողականության հետագա բարձրացումն, վորոնք բավական ժամանակ դեռևս լինելու են յերկրի հատիկային տնտեսության բազան (գները, մեքենաները, հանքային պարարտանյութերը, լավ տեսակի սերմեր, ցանքսերի կոնտրակտացիան, հողաշինարարությանը և այլն), ավելի ու ավելի ընդգրկելու նրանց կոոպերատիվ կազմակերպությունների ցանցում, աջակցելով գյուղացիական տնտեսությունների արտադրողական պրոցեսների միացման գործին: Ցեղնելով գյուղացիական տնտեսություններին կոոպերատիվ շինարարության մեջ ներգրավելու բացահայտ անբավարար արդյունքներից, հատկապես գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի գծով, պլենումն ամբողջ կուսակցության ուշադրությունն է հրավիրում լենինյան կոոպերատիվ պլանի պրակտիկ իրագործման աճող նշանակության վրա՝ անհատական գյուղացիական տնտեսության բերքատվության և ապրանքայնության բարձրացման, ինչպես և նրան ստիճանաբար սոցիալիստական շինարարության հունի մեջ ներգրավելու գործում»:

Սակայն գյուղացիական անհատ տնտեսություններին տրակտոր, շոգեկալսիչ չպետք է մատակարարել, և դա չի հակասում Հ. Կ. կուսի Կենտկոմի վորոշումներին, այլ ընդհակառակը կա լրիվ զուգադիպում: Կոմ. Կուսի և Խորհրդային Իշխանության ընդունած դիծը՝ անհատ տնտեսությունների վերականգնման և բարձրացման խնդրում՝ նկատի ունի չքավոր և միջակ գյուղացիական

սեփականությունները, նկատի ունի նրանց պաշտպանությունը կուլակի սարկացումից։

Կարո՞ղ են արդյոք անհատ չքավոր և միջակ սեփականությունները դնել խոշոր գյուղատնտեսական մեքենաներ (տրակտոր կամ կալսիչ)։ Վոչ չեն կարող, դրանց ուժից վեր է։

Ապա վո՞ր սեփականությունը կարող է դնել իր համար տրակտոր և կալսիչ մեքենա։

Միայն ուժեղ, կուլակային սեփականությունները, վորոնք միջոցներ են կուտակել շրջապատի գյուղացիներին շահագործելով և վորոնք խոշոր գյուղատնտեսական մեքենա ձեռք բերելուց հետո ե՛լ ավելի կհամբերեն իրենց բռում գյուղացիներին, ել ավելի կշահագործեն նրանց։

Կոմ. Կուսը և Խորհրդային իշխանությունը կարո՞ղ են թույլ տալ մեքենայի նման ոգտագործում։ Իհարկե վոչ։ Այդպեսից ել միանգամայն պարզ է, թե ինչու խոշոր և թանգարժեք գյուղատնտեսական մեքենաներն անհատ սեփականության չպետք է տալ։ Բարդ գյուղատնտեսական մեքենաները պետք է տրամադրել բացառապես կոլեկտիվ կազմակերպություններին՝ սկսած ամենահասարակից մինչև ամենաբարդ ձևը։

ՎԱՃԱՌԱՇԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վարկային և մատակարարման աշխատանքներից հետո, գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնական աշխատանքները հանդիսանում են վաճառահանման ոգոպերացիաները (գործառները)։

Գյուղատնտեսական ընկերության խնդիրներից մեկն է՝ շահագրգռել իր անդամներին նրանց սեփականության մթերքների ամենաձեռնտու վաճառահանմամբ։

Ամեն մի գյուղացի փոխանակ կտրի, բանջարեղենը, գամ հացը ծախելու համար հեռու քաղաք գնալու, այդ ամբողջը հանձնում է նա գյուղատնտեսական ընկերության մոտակա ընդունման կայանին։ Իսկ հետագա վա-

ճառահանումն արդեն ընկերության պարտականությունն է:

Ընկերությունը պետք է վերադաս համապատասխան կոոպերատիվ միության միջոցով ամենատնտեսավար, ամենաազնիվ կերպով իր անդամների մթերքները հասցնի սպառողին, և ժամանակին ճիշտ հաշիվ ներկայացնի մթերք արտադրող իր անդամ-փայատերերին:

Վաճառահանումը կոոպերատիվ շինարարության մեջ շատ դեպքերում առաջին ոպերացիան է, որի շուրջը համախմբվում են գյուղացի-արտադրողները: Պետք է ծախել խատ: Ո՞ւմ ծախել... ինչպես ծախել. քանիսո՞վ ծախել,—այդ բոլորը հարցեր են, որոնց մեկնակ լուծելը չափազանց դժվար է: Ծախել տեսուրակամիջնորդին.—նա քեզ կխաբի և կմաքրապարդի. անոդուտ է նրա հետ կապվելը:

Պետք է ծախել կաթի, յուղի ավելցուկը:—Նորից գյուղացու առաջ կանգնում է այն հարցն ու վախը, որոնց պատահել ենք խոտի վաճառման ժամանակ:

Ակամայից ծնունդ է առնում համապատասխան ընկերություն կազմակերպելու միտքը, իսկ հարցն ավելի հեշտ է լուծվում, յերբ մոտիկ շրջանում այդպիսի ընկերություն կա և նա՛ աշխատում է լավ:

Վաճառահանումն ընկերության շուրջն և համախմբել գյուղացի արտադրողներին: Գյուղատնտեսական մթերքների՝ յուղի, կաթի խոտի և այլն արտելային ընկերային վաճառահանում կազմակերպելուց հետո առաջ են գալիս մատակարարման ոպերացիաները, այսինքն ցանկություն է առաջանում ընկերության անդամների համար գնել միանգամից մի պարտյա դուքան կամ բարդ մեքենաներ՝ գյուղատնտեսական արտադրության համար:

Մատակարարման գործի կանոնավորումից հետո միտք է ծագում վարկային աշխատանքների մասին և դրա հետ միասին առաջանում է ագրոկուլտ աշխատանքների անհրաժեշտությունը, քանի որ ձեռնտու վաճա-

ռահանումը պահանջում է մի շարք այնպիսի ձեռնարկումներ, որոնք անհրաժեշտ են մթերքի քանակի և որակի բարձրացման համար:

Այդպիսով կոոպերատիվ վաճառահանումը հանդիսանում է շղթայի այն հիմնական ողակը, որից բռնելով հնարավոր է գյուղատնտեսությունը տանել դեպի նրա հետագա զարգացման, լավացման և կոլեկտիվ հիմքերի փոխանցման կողմը:

Մենք դիտմամբ յերկու խոսքով կանգ առանք վաճառահանման ողբերգության եության վրա, որ անցնենք այն հարցին, թե ինչպե՞ս ողնել չքավոր գյուղացուն՝ նրա գյուղատնտեսական արտադրության մթերքները վաճառելիս:

Գյուղատնտեսական ընկերության վաճառահանման ողբերգությունների բնույթագրումից (որ քիչ վերև ավելցնենք) յերևում է, որ ընկերության վարչությունը կազմակերպելով գյուղական չքավոր և միջակ լայն մասսայի մթերքների վաճառահանումը, առաջին հերթին պետք է կազմակերպի չքավորության մթերքների վաճառահանումը: Այդ վոչինչ, որ սկզբում չքավոր տնտեսությունների ապրանքայնությունն աննշան է: Հենց դրա համար էլ ընկերությունն ավելի ուշադիր պետք է լինի դեպի չքավորների այդ աննշան ավելցուկի վաճառահանումը: Ընկերությունը պետք է հոգ տանի այն մասին, որ իր անդամների մթերքը վաճառի ըստ հնարավորին մեծ շահով, համենայն դեպս առանց վնասի, քանի որ չքավոր տնտեսությունների համար ամեն մի կոպեկը շատ թանգ է:

Ընկերության վարչության այդ ուշադիր վերաբերմունքը՝ չքավոր անդամ-փայատերերի մթերքների վաճառահանման գործին, անշուշտ լավ կարող է անդրադառնալ տնտեսությունների զարգացման վրա, կարող է շահագրգռել այդ չքավոր տնտեսություններին՝ այս կամ այն մթերքը արտադրելու գործում, կարող է ոժանդակել ապրելուց աշխատանքների խորացմանը և, վեր-

չապես կարող է ոժանդակել չքավոր տնտեսություններից կոլեկտիվներ կազմակերպելու մի վորևե մթերք արտադրելու համար: Կոոպերատիվ վաճառահանման հիմնական տարբերությունը սովորական վաճառքից կայանում է նրանում, վոր մի կողմից կատարվում է մթերքների բարեխիղճ ընդունելություն առանց խաբեբայությունների, իսկ մյուս կողմից ստացած մթերքի դիմաց վերջնական հաշվեհարդարը կատարվում է վոչ թե անմիջապես, այլ մթերքը վաճառելուց հետո, ըստ վորում մթերք հանձնող անդամը վերջնական հաշվեհարդարը ստանալիս, ստանում է նաև վաճառահանումից դուրս գալով կոոպերատիվության կողմից այդ գործում կատարած ծախքերը: Այս տարբերությունը ստիպում է գյուղացիներին իրենց մթերքները հանձնել կոոպերատիվին, այլ վոչ թե մատնավոր գնորդին:

Ընկերության վարչությունը պետք է ձգտի, վոր կոոպերատիվ վաճառահանումը ամենից ուժեղ արտահայտվի չքավոր տնտեսություններում: Դրա համար չքավորների տնտեսություններին հատանելիք կոոպերատիվ վերավճարը պետք է վերադարձվի առաջին հերթին և ըստ հնարին առանց պահումների կոոպերատիվի ոգուտին, կամ պահելով չնչին գումարներ:

Մի շարք ընկերություններում վոչ կոոպերացված չքավորներին չահագրգռելու և կոոպերատիվ շինարարության մեջ ներգրավելու նպատակով, նրանց էլ կոոպերատիվ անդամներին հավասար տրվում է կոոպերատիվ վերավճար, յեթե նրանք իրենց մթերքը վաճառահանել են կոոպերատիվի միջոցով (վոչ կոոպերացված գյուղացիներին տրվող կոոպերատիվ լրացուցիչ վճարը կոոպերացվածներից յերկու անգամ պակաս է լինում): Սակայն կոոպ. վերավճարը լրիվ տրվում է այն պայմանով, յեթե գյուղացին անդամագրվում է կոոպերատիվին և ստացված գումարի մի մասը մտցնում է ի մարումն իր մուտքի վճարի և փայավճարի:

Նման միջոցների ձեռնարկում պետք է ստանձնել գյուղատնտեսական կոոպերացիայի ամբողջ սիստեմին։ Դա այլ միջոց է, որով կոոպերատիվը արագ թափով կարող է տանել չքավոր գյուղացիների անդամագրումը և գործնականում ոգնել նրանց տնտեսական զարգացմանը։

Բացի այս, վաճառահանման գործառնքների ժամանակ ընկերության վարչությունը կարող է և պարտավոր է հատուկ շահաբեր պայմաններ առնելով կոլեկտիվ կազմակերպությունների միջերքները վաճառահանելու համար։ Այդ արտոնությունները նորից մի խրախուսիչ փաստ կդառնան չքավորներին կոլլեկտիվում կազմակերպելու, քանի որ չքավորի համար շատ դժվար է գտնել անհատ տնտեսության ճանապարհով։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ վաճառահանման գործառքները կարող են ոգնել ոչ միայն անհատ չքավոր տնտեսությունների գտնվելուն, այլ և ուժանդակել նրանց մխոցման կոլլեկտիվներում։ Բնական է, որ ընկերությունը, հոգ տանելով առաջին հերթին չքավոր տնտեսությունների մասին, ոչ մի բոպե չպետք է աչքաթող անի միջակ գյուղացու միջերքի բարելավումն և ուշադիր վաճառահանումը։

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱ

Գյուղկոոպերացիայի աշխատանքում վերջին ժամանակները բացառիկ նշանակություն և առանում մի ձեռնարկում, որը կոչվում է կոնտրակտացիա։

Ի՞նչ է կոնտրակտացիան.

Կոնտրակտացիան յերկկողմանի պայմանագիր է, որը փոխադարձ համաձայնության հիմունքներով կնքվում է անհատ տնտեսության կամ գյուղացիական կոլլեկտիվի և Խորհրդային պետության միջև։ Պետությունն իր կողմից պարտավորվում է կոլլեկտիվին կամ անհատ տնտեսությանը տալ իր համար կարիք ունեցող միջերքի արտադրության անհրաժեշտ միջոցներ՝ մեքենաներ,

ներմուծում, պարարտանյութ, դրամ, ապրանքներ, հացահատիկ, արդյունաբերական ապրանքներ և այլն:

Իսկ գյուղացին, կամ գյուղացիական կոլեկտիվն իր հերթին, դրա փոխարեն պարտավորվում է վորոշ տարածության վրա ցանել պետության անհրաժեշտ բույսը, այն է՝ հացահատիկ, բամբակ, ծխախոտ և այլն· ստացված բերքի մի մասը վորոշված գնով և պայմանավորված տեղում հանձնել պետության, մացնել իր տնտեսության մեջ բարեփոխումներ, վորոնք կբարձրացնեն տվյալ բույսի ապրանքայնությունը կամ մինչև անգամ կոժանդակեն ամբողջ տնտեսության վերակառուցման: Պայմանագիրը չխախտելու համար յերկու կողմերի համար պարտադիր տուգանք է սահմանվում:

Այս է կոնտրակտացիայի եյությունը: Դրանից արդեն իսկ յերևում է, թե ինչպիսի խոշոր ուժ կարող է լինել կոնտրակտացիան խորհրդային պայմաններում: Կոնտրակտացիայի ոգնությամբ, կնքված պայմանագրի ոգնությամբ՝ պետությունը կարող է վճռականորեն առաջ մղել չքավոր-միջակային հիմնական մասսային վոչ միայն գյուղատնտեսության արտադրողականության և ապրանքայնության բարձրացման ուղղությամբ, այլ և գյուղի հիմնական վերակառուցման, գյուղատնտեսական արտադրության կոլեկտիվացման ճանապարհով:

Պայմանագիր կնքելիս ընկերության վարչությունը շատ խնամքով հաշվի յե առնում պայման կապել ցանկացողներին:

Առաջին հերթին պետք է հաշվի առնել չքավոր տնտեսությունները, վորոնք զբաղվում են տվյալ մթերքի արտադրությամբ:

Չքավոր տնտեսությունների համար պետք է լինեն (գործնականում այդպես էլ կա) ավանսների բարձրացրած նորմաներ, արտադրական միջոցների առավել մատակարարում (ներմուծում, մեքենաներ, պարարտանյութ և այլն):

Չքավորությունն իր հերթին պետք է վորոշակի պարտավորություն վերցնի վոչ միայն հողի վորոշ տարածություններ պայմանագրով նախատեսված բույսեր ցանելու, այլ և տնտեսության մեջ մտցնելու պայմանագրում նախատեսված բարելավումները։ Դա միանգամից կբարձրացնի չքավորական տնտեսությունը, հնարավորություն կտա վերջինին կանգնելու ամուր արտադրական հիմքերի վրա։ Դրա հետ միասին կոլեկտիվ տնտեսությունների համար, ընկերություններ պետք է ունենա հատուկ ձևի պայմանագիր։ Դրանց համար անհրաժեշտ է նախատեսել ավելի շատ արտոնություններ, քան անհատ տնտեսություններին, թեկուզ հենց չքավորական։

Կոլեկտիվներին պետք է իրավունք վերապահվի թե կանխիկ դրամ և թե մեքենաներ ստանալու հերթից դուրս։ Ապրո-ոգնություն նույնպես ցույց և տրվում հատուկ ուշադիր և ուժեղացրած կարգով։

Մի խոսքով պայմանագիր-կոնտրակտացիա կնքելիս, ընկերության վարչությունը պետք է ամեն ինչ անի, վորպեսզի ցույց տա գյուղացիներին կոլեկտիվացման առավելությունները (շրջակա գյուղացիության լայն շրջանով պետք է իրագեկ դարձնել և հասկանալի ձևով պատմել կոնտրակտացիայի և կոլեկտիվներին տրվող առավելությունների մասին)։

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախընթաց գլուխներում խոսեցինք այն մասին, թե ինչ կարող է անել գյուղատնտեսական ընկերությունը չքավորության ոգնության բնագավառում։ Մենք տեսանք, վոր ընկերության հիմնական ոպերացիաները՝ վարկային, մատակարարման և վաճառահանման, կարող են և պետք է ընթանան գյուղատնտեսական ընկերության մեջ գլխավորապես չքավորության շահերի պաշտպանության ուղիով։ Սակայն սխալ կլիներ մտածել, վոր ինքը չքավորությունը վոչինչ չպետք է անի,

միայն սպասի Խորհրդային իշխանության հրամաններով ընկերության կողմից նրան տրվելիք բարիքներին։ Ինքը, չքավորությունը պետք և կազմակերպվի և համախմբվի կոոպերատիվ ընկերությունում, անընդհատ ուղղի նրա վաճառության աշխատանքներն այնպես, որ ընկերության ամբողջ աշխատանքը ընթանա հոգուս չքավորության և մինչակների։

Կոոպերացված և վոչ կոոպերացված գյուղական չքավորության մեջ ամբողջ կազմակերպչական աշխատանքները տարվում և Համամիութենական Կոմ. Կուսակցության (բ.) տեղի կազմակերպությունների կողմից։ Չքավորության կազմակերպման և համախմբման աշխատանքը նույնպես տարվում և կուս. կազմակերպությունների կամ առանձին կոմունիստների ու կոմյերիտականների կողմից՝ անպակաս կուսկազմակերպության հանձնարարությամբ և ղեկավարությամբ։ Կոոպերացված չքավորության կազմակերպման ամենապարզ ձևն և չքավորության խորհրդակցությունները։

Այդ խորհրդակցություններում քննվում և վարչության գործունեության վերաբերյալ զանազան հարցեր, քննվում և վարկերի բաշխման, մատակարարման, վճռառահանման, չքավորության կոոպերացման, կոլեկտիվացման և գյուղատնտեսական ընկերությունների վարչական մարմինների հետագա վերընտրություններին վերաբերվող հարցեր։

Այդպիսով կոոպերացված չքավորությունը մինչև վերջանալը ընդհանուր ժողովը, Կոմ. Կուսի ղեկավարությամբ պարզում և, ի հայտ և բերում իր վերաբերմունքն ընկերության այս կամ այն ձևնարկման և ընկերության վարչական մարմինների կազմի նկատմամբ։ Ժողովներում նրանք հնարավորություն կունենան հանդես գալու ավելի կազմակերպված։ Նման դեպքում չքավորը ավելի մեծ ազդեցություն կունենա ընդհանուր ժողովի վորոշումների նկատմամբ, քան յեթե նախորդ չքավորական վոչ մի խորհրդակցություն կազմակերպ-

ված չլինեք և նրանք վոչինչից սեղյակ չլինեին: Զքաղաքական խորհրդակցություն հրավիրելու նպատակն այն է, որ նախապատրաստի ընդհանուր ժողովում ընդունվելիք վորոշումները այնպես, որ դրանք վոչ միայն համապատասխանեն չքավորության, այլ և միջակի շահերին, միացնեին միջակին ու չքավորին՝ դյուղի գյուղացին և շահագործող մասին հարվածելու համար:

Չքավորության խորհրդակցության կողմից նշված ճիշտ վորոշումները միշտ էլ կատանան միջակների համակրությունն ու պաշտպանությունը և դրանով իսկ խոշոր չափով կվերացվի կուլակի ազդեցության հնարավորությունները կոոպերատիվ ընկերության աշխատանքների վրա:

Այսպիսով միանգամայն պարզ է չքավորական խորհրդակցությունների անհրաժեշտությունը և օգտավետությունը: Համենայն դեպս կոոպերացիայի համար պարտադիր է հրավիրել այդ խորհրդակցությունները մարին յերկու անգամ, ընկերության վարչության հաշվետու դեկուցման նախորեին:

Չքավորական խորհրդակցություն հրավիրելու ժամանակ պետք է հիշել, որ նախ խորհրդակցությունը հրավիրվում է գեկավարվում է Հ. Կոմունիստական Կուսակցության տեղի կազմակերպության կողմից, յերկրորդ՝ խորհրդակցության գոնեը բաց պետք է լինեն միջակների առաջ, և որ այդ խորհրդակցությունների վորոշումները վոչ մի կերպ չպետք է հակասեն միջակների շահերին:

Կարող է հարց ծագել, թե ինչո՞ւ անպայման անհրաժեշտ է այդ խորհրդակցությունների գեկավարությունը կենտրոնացնել Կոմ. Կուսակցության տեղի կազմակերպության ձեռքում: Հարցը շատ պարզ է: Կոմունիստական Կուսակցությունն է միայն, որ հանդիսանալով պրոլետարիատի և չքավոր գյուղացիության ամենապիտակից, առաջադեմ և քաղաքականապես դրագետ մասը, կարող է պաշտպանել, ցրված, անկազմա-

կերպ, հետամնաց, քաղաքականապես վոչ բավական պատրաստված չքավորությանը կուլակի ազդեցությունից, կարող է ցույց տալ չքավոր գյուղացիությանը նրա իսկական ճանապարհը, առաջարկել նրա շահերին համապատասխանող և միջակի հետ դաշինքն ավելի ամրապնդող վորոշումներ:

Ինչ վերաբերում է յերկրորդ հանգամանքին, միջակի առաջ դրները բացելուն և այդ խորհրդակցությունների վորոշումները միջակի շահերին չհակադրելուն, ապա այս բացատրվում է ավելի պարզ.—անհրաժեշտ է անընդհատ ամրացնել և ուժեղացնել դաշինքը միջակ գյուղացիության հիմնական մասսայի հետ:

Չքավոր գյուղացիությունը հանդիսանում է Հ. Կոմ. կուսակցության ամենամամուր հենարանը գյուղում: Սակայն թե հեղափոխությունը և թե սոցիալիստական շինարարությունը հաջողությամբ կավարտվեն այն դեպքում, յեթե գյուղի հիմնական մասսան—միջակ գյուղացիությունը մեր հուսալի դաշնակիցը լինի: Կոմ. կուսը միշտ ու անշեղորեն կրկնում է իրականացնում է Վ. Ի. Լենինի կտակը այն մասին, վոր անհրաժեշտ է միջակ գյուղացու հետ ամրացնել դաշինքը՝ կուլակի դեմ միասին պայքարելու համար:

ՉՔԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԱՊԿՆԵՐ

Չքավորական խորհրդակցությունն անշուշտ պատվեստ և չքավորության շերտի պաշտպանության համար անհրաժեշտ կազմակերպություն է: Բայց խորհրդակցությունները չեն կարող մշտապես ազդել ընկերության առորյա աշխատանքների վրա, համեմատաբար մեծածավալ լինելու պատճառով: Յեթե ընկերությունն ունի մոտ հազար անդամ, նրանցից առնվազն յերեք-չորս հարյուրը չքավորներ են, իսկ գյուղում այդ քանակությամբ մարդկանց ժողովի հրավիրել այնքան էլ հեշտ բան չէ: Մինչդեռ, անհրաժեշտ է, վոր չքավորությունն ամեն ժամանակ անընդհատ ազդեցություն ունենա ընկերության

կերության աշխատանքների վրա։ Դրա համար կամ. կուսի կողմից կոոպերատիվների խորհրդներին, գյուղական կիսակազմակերպում և այսպես կոչված չքավորական խմբակներ։ Կոոպերատիվին կից կազմակերպվող չքավորական խմբակի մեջ փոքրաթիվ կտոն մտնում են Վարչության, Վերատուչ Հանձնաժողովի և Խորհրդի չքավոր անդամները։ Բացի այդ, խմբակի մեջ մտնում են նույն մարմինների կազմում աշխատող կոմունիստները և կոմերիտականները, որոնք մասնակցում են այն չքավորները, որոնք թեև դեկավարող մարմինների կազմում չեն, բայց ցույց են տվել իրենց գիտակից և ակտիվ մասնակցություն հատուկտական աշխատանքներում։

Չքավորական խմբակները, ինչպես նրանց կազմն և ցույց տալիս, ավելի ճկուն են և ավելի հաճախ կարող են հավաքվել, քան չքավորական խորհրդակցությունները։ Չքավորական խմբակի խնդիրներն են՝ ազդել ընկերության ստորյա աշխատանքների վրա և հետևել, որ այդ աշխատանքները չհակասեն չքավորի ու միջակի շահերին, ապահովել կոմունիստական կուսակցության՝ նրա քաղաքական գիծն ու ձեռնարկումներն իրագործելու համար։ Բացի դրա, չքավորական խմբակի խնդիրն է՝ բարձրացնել չքավորի ակտիվությունը, ամրացնել կապը միջակի հետ և պայքարել կուլակի շահագործման դեմ։

Չքավորական խմբակի նիստերը հրավիրվում են կանոնավոր և ամիսը առնվազն մեկ անգամ։ Այդ նիստերում քննվում են ընկերության աշխատանքին վերաբերող գործնական խնդիրները, նույնն ինչ որ չքավորական խորհրդակցություններում։

Ժողովին դեկավարում կամ նախագահում է ընկերության դեկավարող մարմինների (Վարչության, Խորհրդի կամ Վերատուչ Հանձնաժողովի) անդամներից մեկը։

Խմբակի փոքրաքանակները կիրառվում են կյանքում

միայն ընկերության վարչության կողմից հաստատվելուց հետո: Զքավորական խմբակները վոչ մի դեպքում չպետք է իրեն վարչության ֆունկցիաները: Նրանք կոմունիստական կուսակցության ֆրակցիաների նման կարող են ազդել վարչության գծի վրա չքավորի և միջակի շահերի տեսակետից: Այդ բանը լավ պետք է հիշի խմբակի ամեն մի անդամ:

Զքավորական խմբակը կազմակերպվում է այն ընկերություններին կից, վորոնց վարչության կազմում կա թեկուզ մեկ չքավոր:

Իսկ յեթե վարչության կազմում չկա վոչ մի չքավոր, խմբակ չի կազմակերպվում, այլ կանոնավոր կերպով հրավիրվում են փայատեր չքավորների խորհրդակցություններ: Այն ընկերություններում, վորտեղ դեկավարող մարմինների, մասնավորապես վարչության կազմի մեծ մասը կոմունիստներ կամ կոմյերիտականներ են, նույնպես չեն կազմակերպվում չքավորական խմբակներ, յենթադրելով, վոր կոմունիստ և կոմյերիտական աշխատակիցները կարող են բավականաչափ պաշտպանել չքավորության շահերը: Նման ընկերություններում հրավիրվում են միայն ընդհանուր չքավորական խորհրդակցություններ:

Պետք է նկատի ունենալ, վոր չափազանց նպատակահարմար է չքավորական խմբակի նիստերին հրավիրել նաև ընկերության դեկավար մարմինների կազմից այն միջակներին, վորոնք իսկապես ակտիվ են ու չքավոր գյուղացու վստահելի բարեկամը և գործնականում ապացուցել են իրենց պատրաստականությունը պաշտպանելու չքավորության և բատրակության շահերը:

Զքավորական խմբակները կազմակերպելիս նույնպես պետք է նկատի ունենալ, վոր նրանք ձևակերպվում և աշխատում են բացառապես Կոմունիստական կուսակցության տեղի կազմակերպության նախաձեռնությամբ ու դեկավարությամբ:

ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՁՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական ընկերության վարչությունը յուրաքանչյուր տարի մոռանում, որ շքավորությունն ու բատրակությունը գյուղի ավելի հետամնաց, ավելի մութ մասն են եղել և դեռ զգալի չափով այդպիսին էլ մնում են:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, գյուղի այդ շերտն ընդհակառակ լինելով ամենաուժեղ ճնշման, ամենից քիչ հնարավորություններ և ունեցել բարձրացնելու իր կուլտուրական մակարդակը, ձեռք բերել գիտելիքներ: Հոկտեմբերյան հեղափոխությունն այդ բոլորը հիմքից ջնջեց և գոտեմարեց այլ կերպ: Ձքավոր-բատրակային շերտը դարձավ գյուղի գլխավորը:

Քաղաքացիական կռիվների տարիներում, երբ Խորհրդային Հանրապետությունը պաշտպանվում էր կապիտալիստներից, կուլակներից և կուլակներից, գյուղի շքավորները և բատրակները քաղաքի բանվոր-պրոլետարների հետ առաջինը մտան Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի առաջավոր շարքերը: Կռիվները վերջանալուց հետո, խաղաղ սոցիալիստական շինարարության ֆրոնտում գլխավորապես դերը նույնպես գյուղացի շքավորների և բատրակների վերցրին:

Սակայն շքավոր-բատրակային շերտերում այդպիսի առաջատար մարտիկների հետ միասին կան զգալի քանակություն ամբ հետամնաց գյուղացիներ: Կոմունիստական կուսակցության, խորհրդային իշխանության և Գյուղատնտեսական կոոպերացիայի խնդիրներն են՝ բարձրացնել այդ հետամնաց շերտի թե տնտեսական և թե կուլտուրական մակարդակն ավելի բարձր աստիճանի վրա:

Տնտեսության վերելքն ավելի բարձր աստիճանի հնարավոր է միայն բատրակների և շքավորների կուլտուրական մակարդակը բարձրացնելով: Այդ պատճառով կոոպերատիվ ընկերության վարչությունը պետք է

կապվի Ժողովրդական Լուսավորության տեղի մարմինների հետ՝ միասնական ուժերով չքավորների և բատրակների շարքերից անդրադիտություն վերացնելու համար:

Բացի այդ, Վարչությունը մոտակա խրճիթ-ընթերցարանում ավյալ շրջանի մյուս կոոպերատիվ կազմակերպությունների հետ միասին ունենում է կոոպերատիվ անկյուն, որին կից կազմակերպվում է կոոպերատիվ շինարարության ուսումնասիրությամբ զբաղվող կոոպերատիվ խմբակ: Չքավորական խմբակը պետք է այդ կոոպերատիվ խմբակներում ունենա կոոպերատիվի անդամ ակտիվ չքավորների ու բատրակների: Վարչությունը և չքավորական խմբակը ամեն կերպ պետք է աջակցեն կոոպ. խմբակներում սովորող իրենց չքավոր և բատրակ անդամներին, գնելով նրանց համար անհրաժեշտ գրականություն, գրենական պիտույքներ և այլն:

Վերջապես գյուղատնտեսական ընկերության վարչությունը և նրան կից չքավորական խմբակը շահագրգռված են ոչ միայն մեծահասակ չքավորների ու բատրակների անդրադիտության վերացմամբ, կուլտուրական մակարդակի բարձրացումով, այլ նաև նրանով, որ յերիտասարդ սերունդը, չքավորների յերեխաները հնարավորություն ունենան դպրոցներ հաճախելու և դրագիտություն սովորելու:

Մենք գիտենք, որ չքավորների յերեխաները շատ ժամանակ չեն հաճախում դպրոց՝ շոր, կոշիկ կամ դասագրքեր չունենալու պատճառով: Ընկերության վարչությունը ծանոթ լինելով անդամների տնտեսական դրությանը, նրանց սուր կարիքի դեպքում պետք է ոգնություն ցույց տա չքավորների յերեխաներին: Հասկանալի յե, որ ընկերության վարչությունը մոտացության չպետք է տա և մյուս անդամների կուլտուրական զարգացման խնդիրը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԿՈՒԼՏՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ՁՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական ընկերության, մանավանդ մասնագիտական ընկերության (կոմթնատնտեսական, ծխատնտեսական և այլն) վարչությունը բացի կուլտուր-կրթական աշխատանքներից, պետք է զբաղվի և ագրո-կուլտուր աշխատանքներով, որոնք կնպաստեն ընկերության անդամների անտեսության զարգացման, բերքատվության բարձրացման և գյուղատնտեսական մթերքների վաճառքի լավացման:

Ագրո-կուլտուր աշխատանքները տարվում է մասնավորապես հետևյալ ձևերով. ագրոնոմը կոոպերատիվի անդամներին անհրաժեշտ խորհուրդներ և տալիս, անդամ-վաստակների զարգացնում կազմակերպում և ցուցադրություններ, փորձադաշտեր, հիմնում է ագրոնոմական գիտելիքների զանազան ճյուղերի վերաբերյալ դասընթացներ, ագրո-արտադրական բնույթի ձեռնարկներ, (սերմատուներ կայաններ, նոխնական վերամշակման կետեր, ստացատներ և այլն), ինչպես և կոնտրակտացիայի ձևով գյուղատնտեսական այս կամ այն կուլտուրայի ցանքեր:

Այս աշխատանքներում նույնպես ստացնություն պետք է տրվի գյուղական չքավորական ու բատրակության ավելի հետամնաց շերտերին:

Վարչությունը ի նկատի պետք է ունենա, որ ագրոնոմը կոոպերատիվի անդամների անտեսությունները շրջելիս, պարտավոր է լավ ծանոթանալ, համապատասխան խորհուրդներ տալ, թե ինչպես տանել աշխատանքը՝ կարիքի ճիրաններից ազատ ապահովելու համար: Վարչությունը պետք է հրահանգի ագրոնոմին ստացին հերթին փորձադաշտեր կազմակերպելու չքավորների անտեսության մեջ: Իր հաղորդում փորձ-ցուցադրական դաշտ ունենալու դեպքում չքավորը կտեսնի, թե ինչպես պետք է մշակել հողը՝ լավ բերք, լավ վաճառքի մթերք ունենալու համար:

Կուրսեր կազմակերպելիս Վարչությունը նույնպես առաջին հերթին տեղեր է հատկացնում չքավորներին: Նրանք առաջինը պետք է գյուղատնտեսական գիտելիքներն սովորեն՝ իրենց տնտեսությունն առողջացնելու համար:

Արտադրական ձեռնարկները կազմակերպելիս, Վարչությունը չքավոր անդամներին հրավիրում է աշխատանքի, վորպես բանվորական ուժ, իսկ հետո ձեռնարկի գործունեության ընթացքում աշխատողների կարիք լինելու դեպքում, Վարչությունը տեղի պրոֆեսիոնալ կազմակերպության հետ համաձայնեցնելով հրավիրում է նույնպես չքավորին: Ցեվ վերջապես՝ ձեռնարկը առաջին հերթին սպասարկում է չքավորներին, այն էլ արտոնյալ պայմաններով:

Ցեթե վարչությունը անցնե կացնում կոնտրակտացիա, ապա նույնպես կոնտրակտացիան առաջին հերթին կնքվում է չքավոր անդամ-փոյատիրոջ հետ, վորին տրվող ավանսի չափը մյուս խավերից պետք է ավելի բարձր լինի:

Այդ բոլոր ձեռնարկումները, յեթե գործնականորեն անցկացվեն չքավոր գյուղացիների տնտեսություններում, անշուշտ կարճ ժամանակվա ընթացքում դրական արդյունք կստացվի: Թե միայնակ և թե առանձնապես արտելային չքավորական տնտեսությունները կարող են համեմատած կարճ ժամանակամիջոցում ամրանալ և վոտքի կանգնել:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԴՐԵՐԸ ՅԵՎ ՉՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի գյուղատնտեսական ընկերությունում գոյություն ունին մի չարք պաշտոններ, վորոնց համար հրավիրվում են վարձու ծառայողներ: Այդ պաշտոններն են՝ պահեստապետ, մթերքներ ընդունողներ, պանրի և յուղի վարպետներ, ընկերության տանձին կետերի վարիչներ և այլն:

Շատ հաճախ այդ պաշտոններում աշխատում են այնպիսի մարդիկ, վորոնք ընդհանրապես խորթ են

գյուղացու տնտեսության, կամ էլ անցյալի մարդկանցից, որինակ՝ խանութպաններ, առևտրական միջնորդներ, կարմածատերեր և այլն: Նման ծառայողները շատ հաճախ ոչ միայն չեն նպաստում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը, այլ բնդհակառակը խոչընդոտ և հանդիսանում:

Վարչությունը և չքավորական խմբակը (փոքրաց այդպիսին կա) ընկերության ապարատը կազմակերպելիս, գյուղացու հետ անմիջական չփում ունեցող աշխատակիցներ ընտրելիս, պետք է հրավիրի այնպիսի մարդկանց, որոնք յուր ծանոթ են գյուղացիությանը, վայելում են չքավոր և միջակ լայն մասսայի վստահությունը, փորձված են հասարակական աշխատանքներում, գործնականում ապացուցել են խորհրդային պետության կազմակերպիչ լինելը և, վերջապես կարողանում են պաշտպանել չքավորի և միջակի շահերը հանդեպ կուլակի:

Այլ կերպ ասած, Վարչությունն այդ պաշտոններում պետք է առաջ քաշի այնպիսի չքավոր գյուղացիների, որոնք բնդունակ են հանձնարարված աշխատանքը կատարելու:

Վարչությունը վերապահ մթության կողմից կազմակերպվող կոոպ. աշխատավորների վերապատրաստման կուրսերում պետք է առաջադրի իր թեկնածուներ սովորելու համար:

Գյուղատնտեսական ընկերության վարչությունը մեծ այդպիսի քարոզչությամբ կապահովի ապարատի խոկական կազմը չքավոր ու միջակ գյուղացիության լայն մասսաների հետ, կապահովի գյուղացիության այդ խավերի վստահությունը դեպի կոոպերատիվը, կապահովի նրա գործնեության հաջող զարգացումը և լուծելու գյուղատնտեսական կոոպերացիայի առաջ կանգնած հիմնական խնդիրները, այն է՝ բարձրացնել մեր գյուղի գյուղատնտեսական արտադրությունը և փոխանցել նրան կոլեկտիվացման ռելսերի վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Գյուղատնտեսական Կոոպերացիայի հիմնական նպատակները ու խնդիրները 3
2. Հիմնական դիրքավորումը չքավորության նյութական-տնտեսական ոգնության ժամանակ 10
3. Գյուղատնտեսական Կոոպերացիայի առաջին խնդիրը չքավորության մեջ տարվելիք աշխատանքներում — չքավորության կոոպերացումն է 1
4. Նյութական-տնտեսական ոգնությունը չքավորության . 16
5. Կազմակերպչական աշխատանքը չքավորության մեջ . . 35
6. Կուլտ-կրթական աշխատանքները և չքավորությունը . 41
7. Գյուղատնտեսական Ընկերության ագրոկուլտուր աշխատանքը և չքավորությունը 43
8. Կոոպերատիվ կադրերը և չքավորությունը 44

ՀԱՅԿ ԳԻՏ. ԻՐԱՏՈՒՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003497

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

154.

Ա II 23599